ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2020 թվականի հունիսի 01-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/29»

Դատական դեպարտամենտի կարիքների համար տնտեսող լամպերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/29» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 27.05.2020թ. և 28.05.2020թ. ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 01.06.2020թ. տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1
«Չափաբաժին 3
Կարող է արդյոք լամպի երկարությունը լինել 115 մմ 110-ի փոխարեն?»

Պարզաբանում N 1
Անհրաժեշտ է ներկայացնել ապրանք, որը բոլոր չափանիշներով կհամապատասխանի հրավերով սահմանված գնվելիք ապրանքի տեխնիկական բնութագրին:

Հարցադրում N 2
«Չափաբաժին 4
Կարող ենք արդյոք պահպանելով լուսային հոսքը առնվազն 1000 լյումեն տրամադրել 12 վատ հզորությամբ լամպ?»

Պարզաբանում N 2
Անհրաժեշտ է ներկայացնել ապրանք, որը բոլոր չափանիշներով կհամապատասխանի հրավերով սահմանված գնվելիք ապրանքի տեխնիկական բնութագրին:

Հարցադրում N 3
«Նկարագրի հնարավոր փոփոխություն
Ավելի էներգաարդյունավետ լամպի տրամադրում
1. 2-րդ չափաբաժնի լուսատուի պահանջվող հզորությունը նշված է առնվազն 25Վտ, մնացած բոլոր պահանջվող պարամետրերը կարող ենք ապահովել 24Վտ հզորությամբ լուսատույով: Խնդրում ենք դիտարկել 24Վտ տարբերակի ընդունման հնարավորությունը, քանի որ առաջարկում ենք առավել էներգաարդյունավետ տարբերակ:
2. 3-րդ և 4-րդ չափաբաժիններում նշված լամպերի՝ 3-րդ առնվազն 1200լմ և 4-րդ առնվազն 1000լմ լուսային հոսքը, ինչպես նաև պահանջվող մնացած բոլոր տեխնիկական պարամետրերը կարողանում ենք ապահովել 11 Վտ (1230լմ) հզորությամբ լամպով: Խնդրում ենք դիտարկել 11Վտ տարբերակի ընդունման հնարավորությունը, քանի որ առաջարկում ենք առավել էներգաարդյունավետ տարբերակ:

Առաջարկվող Philips լամպերին տրամադրում ենք 3 տարի երաշխիք, սակայն տուփի վրա նշված է միջին աշխատանքային ժամկետ՝ 8000 ժամ: Նշված լինի 50.000, 15.000 կամ 8.000 ժամ, միևնույն է դա 3 տարուց շատ ավելի երկար ժամկետ է և վստահեցնում եմ, որ, ոչ մի արտադրող տվյալ տեսակի լամպի համար 3 տարուց երկար երաշխիքային ժամկետ չի տրամադրում:

Տեղեկացնում եմ նաև որ, եթե Philips ընկերությունը՝ հանդիսանալով համաշխարհային լուսատեխնիկայի առաջատար արտադրող, ունենալով լամպի արտադրության 130 տարվա փորձ, արտադրանքի տեխնիկական պարամետրերը տրամադրում է իրական "թվերով", այնինչ բազմաթիվ այլ արտադրողներ մատնանշում են ոչ իրական պարամետրեր, մասնավորապես խոսքը վերաբերվում է տվյալ դեպքում աշխատանքային ժամին, որը գրեթե անհնար է ստուգել և վարահսկել: Հետևությունները թողնում եմ Ձեզ...»

Պարզաբանում N 3

Անհրաժեշտ է ներկայացնել ապրանքներ, որոնք բոլոր չափանիշներով կհամապատասխանեն հրավերով սահմանված գնվելիք ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/29» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Արուս Խաչատրյանին:

Հեռախոս՝ 010-511-787:

Էլեկտրանային փոստ՝ ddgnumner@mail.ru:

«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/29» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: